

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի թիֆլիսեցի օրիորդ, որ ուսում է առել Գալստիանոս օրիորդաց դպրոցում, խնդրում է մեզ յայտնել, որ ցանկանում է մասնաւոր տնկերում դասեր տալ՝ թաւաբանութիւնից, պատմութիւնից, աշխարհագրութիւնից, բնական գիտութիւններից, հայերէն լեզուից և նոյնպէս ուսանելու լեզուից փոքր մասնակիներն: Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրութեան մէջ:

«Тифл. Объявления» լրագիրը հաղորդում է որ զեկտեմբեր ամսից հրատարակվելու են թիֆլիսում երկու նոր լրագիրներ ուսանելու լեզուով մինը «День» (Օր) ամենօրեայ, իսկ երկրորդը «Свѣтъ» (Լոյս), շաբաթը երեք անգամ:

ՇԱՄԱԽՈՒՅՑ մեզ գրում են: «Նորերումս քաղաքիս մտակալքում դանկող գիւղի քահանայ գիշերով գնում է մէկ զիւղացու տուն, որի տէրը բացակայ է լինում: Տէր-հայրը դարկում է դուռը, բայց կինը չէ բաց անում, ասելով թէ մարդս տանը չէ և թէ կէս զիշերին չէ կարող ընդունել նրան: Տեսնելով, որ ոչինչ չհար չը կայ կնոջը համազօր, քահանայն բարձրանում է ասնիքը և օջախի ծակից ներս ընկնելով տուն, կամենում է բռնաբարել կնոջը, որ պաշտպանում է իր անձը, մինչև որ դրացիները օգնութիւն են հասնում և գնում են քահանային տան մէջ տեղում կանգնած:»

Մեզ հաղորդում են ՍՂՆԱԽՈՒՅՑ հետեւալը: «Ոչոտոտի 3-ին Սղխախի փոստատանից կորուստ 4,000 բուրլ գումար: Միւս օրը երեկոցան գտան այդ փողը փոստատան կառավարչի մանկան սայլակի մէջ: Կանակարգը վարչի մէջ Նիւտի փոստարկիւմ է սրա մասին: Քննութիւնը սկսված է:»

Նորերումս հրատարակվեցաւ լայնցիւղում, Բըրօհատգի մաս, ուսանելու լեզուով մի գիրք, անյայտ հեղինակի՝ Շախմատի Ռուսաստանի ներկայ գրութեան մասին (Письма о современном состоянии России) վերնագրով: Կառավարութիւնը թիւ 100-էն առաջ այդ գիրքին Ռուսաստանի մէջ մուտքը: Գիրքը բաղկացած է 140 էրեսից և կուսում է Ռուսաստանի պաշտօնական գրականութիւնը, կառավարչական հիմնարկութիւնները, մամուլը, պետական բիւրոյի, ուղղափառ եկեղեցու, ուսուցիչների, գիւղացիների հոգիների, պետական հարկերի և այլ ամենահետաքրքիր ժամանակակից հարցերի մասին: Գիրքը առաջարկում է սալ ազատութիւն մատուցել, գումարել ուսուցաց խորհրդակցական (совѣщательный) ազգային ժողով, ինչպէս որ լինում էր Պետրոս Մեծից առաջ, խորհուրդ է առաջարկում հրոստիկ կրօնների ազատութիւնը և այլն: Գիրքի հեղինակը իր ուղղութեամբ երեւում է թէ պատկանում է սլավոնոֆիլների կուսակցութեանը: Եւրոպական պետական կառավարչութիւնը, եւրոպական սահմանադրութիւնները նա խաբէրակութիւն է անուանում: Առհասարակ գիրքը, ինչքան էլ թույլ կողմեր ունենայ, նրան արժէ կարգաւ: Թիֆլիսում այդ գիրքը կայ արդէն:

«Русский Курьер» լրագիրը, որ ինչպէս յայտնի է, չորս ամսով արգելիցաւ կառավարութիւնից, երէկվանից սկսած այլ ևս չէ գալիս թիֆլիս:

Այս օրերս մի երիտասարդ կամենալով մտնել ուսուցչական աստիճաններին մէկը, գնում է թիֆլիսի հայոց կոնսիստորիա և պահանջում է որ տան նրան ծննդեան վկայականը: Բայց կոնսիստորիան այսօր վաղը գցելով, երկար ժամանակ չէ տալիս երիտասարդին նրա պահանջած մտերիկականը: Վերջապէս երիտասարդը ստիպվում է 30 բուրլ ընծայել կոնսիստորիայի ծառայողներից միմեկին և իսկոյն ստանում է իր վկայականը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԿԻՐ

Վիեննայից հեռագրում են անգլիական «Standart» լրագիրն որ Ռուսաստանը ա-

ջակցում է Լօրդ Կրօմբրինի ջանքերը Կրօմբրինի մէջ թիւրքաց Հայաստանում ըէֆօրմներ մտցնելու վերաբերութեամբ: Միւս պետութիւնները չէզօք են պահում իրանց առժամանակ այդ խնդրի վերաբերութեամբ, նրանք փոքր ինչ կասկածաւոր աչքով են նայում ուսուցչական միջամտութեան վրա: Թէև Եւրոպական միւս պետութիւնները բոլորն էլ հասկանում են Արմենիայի մէջ ըէֆօրմների իրագործման անհրաժեշտութիւնը, բայց այժմեան բազմա չեն համարում պիտի այդ խնդրի շուտով լուծելու մասին:

Այդ լուրը սրտատպելով «Донская Пчела» ուսու լրագիրը կրկին նուիրում է մի առաջնորդող յօդուած հայոց խնդրին: Ահա այդ յօդուածը:

Այս բազմա ամենահետաքրքիր խնդիրը հայոց խնդիրն է, քանի որ նա կազմում է մի մաս այն Գորդեան հանգոյցի, եւրոպայի համար, որ անուանվում է արեւելեան խնդիր: Բոլոր եւրոպական պետութիւնները, որոնք շահ ունեն արեւելեան հարցի խաղաղ կերպով վճարելու մէջ, միակերպ ցանկանում են շտրպել հայերին, ինչպէս Օսմանեան պետութեան ամենաքաղաքակիրթ ազգին, ինքնավար քաղաքական գոյութիւն: Ռուսաստանը և նրանից յետոյ Անգլիան համոզվելով, որ թիւրքաց կառավարութիւնը որ գուրկ է մարդասիրական սկզբունքներից և իրան յատուկ անտարբերութեամբ նայում է իր ստրկացած ազգերի անմիթխար դրութեան վրա, որոնք մահմետականութեանից ջոկ կրօն են դառնում, կարելի է դրականացնել ասել այն եզրակացութեանը հասան որ անհրաժեշտ է, եթէ կարելի է, զիւսանազիտական ծանապարհով, անյապաղ վճիռ տալ հայոց խնդրին: Վճռել այդ խնդիրը այդ ծանապարհով հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ Ռուսաստանը, որպէս թիւրքաց Հայաստանի հարեան պետութիւն, և ուրիշ իրաւունք ունեցող հոգալ իր հիւնդիստութեան պահպանելու մասին այդ կրկին մէջ, և Անգլիան, որ յանձն տաւ հոգանաւորութիւն փոքր-Ասիայի թիւրքաց նահանգների վրա, վերջ կը գնեն իրանց փոխադարձ թիրահաւատութիւններին արեւելեան քաղաքականութեան վերաբերութեամբ: Վերջին ժամանակ աւելի և աւելի յայտնվում են այդ կրկու պետութիւնների մէջ համաձայն գործողութեան և միմեանց մտտեւոր նշանները և այդ պատճառով մեզ ներկի կը լինի երկնադրութիւն անել, որ թիւրքաց հայերի վիճակը մտնիլ ապագայում ապահոված կը լինի:

Այժմեան ժամանակին հայոց խնդիրը, շարունակում է ուսու թերթը, պաշտպանվում է և առաջ է տարվում նոյն իսկ հայերի ձեռքով: Նրանք հասան ինքնաձեռնաբար, նրանք պարզ գգում են որ արժանի են աւելի լաւ վիճակի և այլ ևս չեն կարող ստրկութեան մէջ մնալ: Հայերը ապրում են ոչ թէ միայն թիւրքայում բայց և Ռուսաստանը բազմաթիւ հպատակներ ունի այդ ազգից և հայոց ինտելիգենցիան կենտրոնացած է այժմ թիֆլիսում: Այդ պատճառով, շարունակում է «Донская Пчела» թերթը, եթէ թիւրքեան յամառութեամբ հրաժարվում է հայերին կառավարելու սիրտեմայի մէջ ամեն տեսակ բարեկարգութեանից և ըէֆօրմներից, այն ժամանակ այդ գործը պէտք է իր ձեռքն աւելի մի կողմից Ռուսաստանը, որ նրա հետ բաժանում է քաղաքական իշխանութիւնը հայոց ազգի վրա, և միւս կողմից Անգլիան: Իսկ միացած պետու-

թիւնները՝ Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան և Աւստրո-Ունգարիան, որոնք նոյնպէս շահ ունեն այս կամ այն կերպ վճարված տեսնելու արեւելեան դարեր խնդիրը, պէտք է կարծել որ նոյնպէս չեն յայտնաւոր միանալ յիշեալ երկու պետութիւնների հետ, երբ նրանց կը խոստացվի, որ վերականգնեցրած Արմենիան նոյն կազմակերպութիւն կունենայ, ինչպէս օրինակ բողաբական իշխանութիւնը:

ՐՈՒՄԻՆԻՍ

«Порядок» լրագրի մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը:

Տգիտութիւնը և խաւարը ամենից շատ վտանգաւոր են ինչպէս մասնաւոր նոյնպէս և հասարակական գործերի մէջ: Սահմանադրական պետութիւնների մէջ մամուլը այն պատճառով է նշանաւոր տեղ բռնում, որ նա մի ձրի միջոց է իմանալու համար այն բոլորը, ինչոր կատարվում է հասարակական կեանքի ամենաճանկալի անկիւններում: Կառավարութիւնը ծանօթանում է այս կամ այն տեղի պէտքերի և պահանջների հետ, հասկանում է ոչ թէ միայն այս կամ այն ժամանակակից հասարակական վերանորոգութեան անհրաժեշտութիւնը, այլ և ստանում է ընդունակութիւն ապագան նախատեսելու համար: Մի խօսքով մամուլը համարձակ կարող է անուանվել մի պահպան, որ մշտապէս արթուն հսկում է ժողովրդի հասարակական և ազգային շահերի վրա: Երբ մամուլը կատարում է հասարակական այսպիսի կոչում, այն ժամանակ նրան իրաւացի կերպով կարելի է պետական շորթը ոյժ անուանել:

Բուսնիական ազգութեան համար ծանր և տխուր ժամանակներում գոյութիւն ունէր «Romanul» լրագիրը, որ հիմնված էր բուսնիական ժողովրդի ամենաեռանդոտ գործիչներից մէկի Ս. Ա. Բոստոխի աշխատանքներով: Գեո. 1848 թուականին այդ լրագրի հիմնողը շատ անգամ եմթարկվել է բանտարկութեան, արտաքսման և մինչև անգամ աքսորանքի: Բայց հաստատարի մնալով իր սկզբունքներին, որոնք նրա արիւն և մարմին էին դարձել, նա ոչ մի անգամ չը դաւաճանեց նրանց և չը շղկեցաւ մի անգամ ընտրած ծանապարհից և նրա հիմնած լրագիրը հասաւ այն նպատակին, որ որոշել էր նրա հիմնողը: Այս տարի օգոստոսի 3-ին կը լրանայ 25 տարի, ինչ այդ լրագիրը գոյութիւն ունի: Այդ առիթով այդ տեղական լրագրի բոլոր խմբագիրները և աշխատակիցները պատրաստվում են տօնել նրա 25 ամեայ յօրեկանը: Այդ լրագրի պատմական նշանակութիւնը, հրատարակչի անձնաւորութիւնը, որ ազատամիտ կուսակցութեան առաջնորդ է համարվում, այդ մասնաւոր տօնին աւելի ընդարձակ բնաւորութիւն են տալիս և կարելի է հաւատացած լինել, որ երկրի քաղաքական բոլոր կուսակցութիւնները կը մասնակցեն պատրաստվող հանդիսին:

Որովհետեւ այս անգամ ևս սկսեցի մամուլի մասին խօսել, ուրիշն այդ նիւթի վրա էլ կը շարունակեմ գրել: Բուսնիայի մէջ ներկայումս հրատարակվում են 39 ամենօրեայ թերթեր, որոնցից միայն 32 կախումն ունեն կառավարութեան, որովհետեւ մնացած 7 թերթերը կառավարութեանից են հրատարակվում: Համաձայնեցէք, որ մի փոքրիկ, հինգ միլիոն ազգաբնակչութիւն ունեցող պետութեան համար լրագիրների այդ թիւը բաւական նշանաւոր է: Բայց լրացի այդ լրագիրներից կան և շա-

բաթական և ամսական տեսութիւններ, որոնց կարելի է համեմատել արեւմտեան այդպիսի հրատարակութիւնների հետ: Մեզ այժմ պակաս են գիտնական հրատարակութիւններ և պակաս են ոչ թէ այն պատճառով, որ նրանց կարգացող և պահպանող հասարակութիւն չը կայ, այլ այն պատճառով, որ Բուսնիայի մէջ մինչև այժմ լրագիրների և ամսագիրների հրատարակողները ամբողջապէս նուրիված են իրանց նիւթական շահերին և հրատարակութեան գործի վրա բուն առեւտրական տեսակետից են նայում: Ծանր գիտնական հրատարակութեան ընթացողների թիւը բաւական սահմանափակված է, հետևապէս այդպիսի հրատարակութեան օգուտներն էլ բաւական աննշան կը լինեն, մինչդեռ քաղաքական լրագիրը միշտ տարածվում է, միայն թէ նա այնպիսի անձից հրատարակվէր, որ քաղաքական որ և է ուղղութիւն ունենար: Այդ պատճառով մեր լրագիրները այս կամ այն քաղաքական անձաւորութեան կամ այս կամ այն քաղաքական նախաձի արտայայտողներ են: Մեր միւստարների մէջ հազաւազուտ է այնպիսին, որ իր քաղաքական լրագիրը չունենայ, մեր պետական գործիչներից գրեթէ իւրաքանչիւրը հրատարակել է մի լրագիր, որի էջերն օգնութեամբ նա անց է կացրել իր քաղաքական նախաձիքը:

Պէտք է իրաւացի լինել բուսնիական ընթացող հասարակութեան վերաբերութեամբ. նա ամենակարճ ժամանակամիջոցում սկսել է չափազանց հետաքրքրվել տպագրական խօսքով և ներկայումս հազաւազուտ է այնպիսի մի հիւրանոց, ճաշարան, խոհանոց, խանութ, որ չը ստանար մայրաքաղաքի կամ տեղական մի որ և է քաղաքական լրագիր: Ամենքը կարդում են, բայց թէ ինչ են կարդում այդ այլ խնդիր է, բայց այնու ամենայնիւ կարդում են և հետաքրքր են իմանալ, թէ ինչ է կառավարում ամբողջ աշխարհի և իրանց երկրի մէջ: Առժամանակ այդ էլ բաւական է, մի ժամանակ ճաշակն էլ ու կրկին անել կը զարգանան և այդ ժամանակ զրախանութիւնը ստիպված կը լինի ընդարձակել իր շրջահայեցողութիւնը և հոգալ այն ձեւերի մասին, որոնցով նա մտքի և գաղափարներ է քարոզում տպագրական խօսքի օգնութեամբ:

ՆԱՄԱԿ ՅԲԱՆՍԻԱՅԻՑ

Փարիզ 10 օգոստոսի

Ուրախութիւնով լսեցինք, որ վիեննայում մի շաբաթաթերթ է հրատարակվում «Journal d'Orient» վերնագրով, որը իրան ամբողջապէս Արեւելեան խնդրին է նուիրել: Այս լրագիրը արդէն 18 ամիս գոյութիւն ունի, և միշտ պաշտպանել է արեւելեան ազգերի իրաւունքները: Վերջին ժամանակներից նա սկսեց մասնաւորապէս հայոց հարցով պարագլ և մի քանի յօդուածներ հրատարակել «Question armenienne» վերնագրով: Խմբագրութիւնը խոստանում է միշտ սիրով պաշտպանել հայոց դատը, եթէ ի հարկէ մի որ և իցէ համակրութիւն գտնի մի ազգաբնակչի կողմից: մենք, որ կարդացել ենք այս գրուածները, հաւատացած ենք, որ նրանք կարող են ուղղութիւն դարձնել իրանց վրա, և այս հրատարակութիւնը իր լուրջ ուղղութիւնով կարող էր գուցէ լրացնել մեր ամենիս ցանկութիւնը: Եւրոպայում ամուռնի միջոցով հայկական շահերի պաշտպանութիւնը:

Ուստի փարիզի հակազեան ուսումնասիրաց ընկերութիւնը պատուիրեց ինձ թղթակցութեան մասին «Journal d'Orient» լրագրի պ. խմբագրի հետ և սհա ինչ է այս վերջին պատասխանը: Ի՞նչ լրագիրը ոչ մի նիւթական օգնութիւն չէ ստանում ձեր ազգից և ևս մի բան եմ միայն խնդ-

րում ձեռնարկը այս հրատարակութեան միջոցով պաշտպանուած համարը — Ես խնդրում եմ, որ խոսքը ընդհանրապէս վերաբերուի լրագրի տարածմանը նպաստելու համար կարող էք ամենի հաւաստիացնել, որ իմ լրագրի ըստանձնել է ձեր իրաւունքները պաշտպանութիւնը և խոստանում է պահպանել նրան... ես յուսով եմ, որ զուգ կաշխատէք բարձրանել իմ բաժանորդների թիւը գործի յանձնութեան համար: Աչքի առաջ ունեցէք, որ մեր բաժանորդների շարքում գտնուում են Ֆրանսիայի, Անգլիայի և Եւրոպին-Կոնստանտնուպոլսի շատ քաղաքացիական մարմիններ: — Լրագրի 30 և 31 №-ներ հարիւրաւոր օրինակներով ուղարկված են արդէն զանազան տեղեր նշանուոր անձանց և կարենոր հրատարակութիւնների:»

Չաղորդելով ձեզ այս ուրախալի լուրը, հայկ. ընկերութիւնը խնդրում է ձեզ, պ. խմբագրի, դարձնել այս գործի վրա հասարակութան ուղարկութիւնը և ամեն միջոցներով (որոնք զուգ յարմար կը դատէք) նկատել և ընդարձակութիւն տալ այս կարեւոր հրատարակութեանը:

Մեծայայտ ենք որ մեր հասարակութիւնը և մասնաորակէս հայ երիտասարդութիւնը կը բարեհաճի նմանակա տեղեկութիւններ և թղթ-թակցութիւններ ուղարկել յիշեալ շաբաթ-թերթին: Այս մասին խմբագրութիւնը խնդրել է մեզ մասնաւոր նամակով և դիմել է ամենին իր լրագրի միջոցով: Բաժանորդ գրովները կամ թղթակցութիւններ ուղարկողները (թղթակցութիւնները կարող են հայերէն լեզուով լինել) կարող են գիմել հայկազեան ուսումն. ընկ. Rue des Feuillantines 47 Paris կամ ուղղակի լրագրի խմբագրին այս հասցեով. M. F. Salles, redacteur en chef du «Journal d'Orient» Rauhensteingasse, 10 Vienne: Այս լրագրի մասին ձեզ մի տեղեկութիւն տալու համար, ուղարկում եմ նրա վերջին համարը:

Ինչորենք մեր միտ հայ հրատարակութեանց արտաստակ այս լուրը:

Հայկ. Ռուսումն. ընկերութեան կողմից
Վ. Արժուռնի

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿՈՒԱՅԻՆ

Ս. Պոլսի, 2 օգոստոսի
Եթէ կայ թիւրքերի վրդերն այժմ դաշտով մի թունակց խնդիր, գիտէք որ այդ հայոց խնդիրն է, բոլոր պետական ներդրանքի ամենանշանակաւոր և պատմաբար թիրաբար ոչ միայն հաստատութեան փոքր-Ասիայում, այլ նորա ամբողջ գոյութեան և ապագայի վերաբերմամբ: Այս է պատճառը, որ թիւրք կառավարութիւնը չէ կարող մարտել հայոց խնդրի երեւան դալը Ռուսաստանի ձեռքով, որը խաղաղութիւն կապելով ճանկատանի հետ, թողնէ նորա կանգնութեան համար մի ձեռնակ ցու. որը կարող է լինել և խիտ մանաբար առանց այն էլ հրահանգում թիրաբար կարգուածքի համար... Չը կարողանալով մարտել այդ խնդրը, թիւրքան միշտ մեծապէս ուշադիր է Ռուսաստանից եկող և ուսումնասիրելից դուրս ցայտող իւրաքանչիւր խօսքին և տղին, աւալ նորան այս ինչ, այն ինչ նշանակութիւնը Ռուսաստանի ժողովուրդը հետազոտութեան վերաբերմամբ իր ամբողջութեան դէմ փոքր-Ասիայում: Թիւրքան լինելով շատ ճարտիկ և խրատման իրան սպառնացող վտանգները ըստ արժանանքի գնահատելու համար, շատ լաւ գիտէ որ չափ էլ Անգլիան հետամուտ լինի հայոց գործին, դարձեալ նորանից այնչափ վրասն չէ կարելի սպասել իր գոյութեան համար փոքր-Ասիայում, որչափ ուսուց կողմից: Թիւրքան շատ լաւ գիտէ թէ ինչ մեծ ոյժ և ազդեցութիւն ունէ Ռուսաստանը փոքր-Ասիայի վրա, ունենալով կող-կասում իր ձեռքի տակ մէկ միլիոն ու կէս հա-մետ, խաղաղապէս, բայց արթուն և հաստատա-միտ հայ ազգաբնակչութիւն, որը իր տէրութեան և իր սեփական շահերով այնչափ սերտ կերպով կապված է փոքր-Ասիայի իր երեք միլիոն համարիւնների հետ, վատնորոյ այդ մեծ ոյժը միշտ կարող է խիտ շօշափելի և նիւթական գորու-թիւն լինի Ռուսաստանի ձեռքում առանց պատերազմի, խաղաղ և անվտանգ ձանապարհով հիմն ի վեր տապալել թիւրքանի գոյութիւնը փոքր-Ասիայում: Մինչդեռ այդպիսի մի յարմարութիւն և զգալի ոյժ Անգլիան ոչ ունի և ոչ էլ կարող է ունենալ: Աճա այս տեսակետից է, որ թիւրքաց կառավարութիւնը Բերլինի դաշնադրութիւնը

նը կհեղուց յետ, այնչափ հետամուտ է միշտ ուսուց կառավարութեան և մամուլի արամա-գրութեան հայոց վերաբերմամբ: Այս է պատ-ճառը որ «Новое Время»-ի մէջ նորերս գրված անտակա և անմիտ յօդուածը հայոց դէմ, այն-չափ լաւ մատի փաթեթման դառաւ: Թիւրքերի համար այս տեղի հայ խնամելուցնային հա-ւատանքի թէ՛ ռուս ալրութիւնը միշտ թըլ-նամի և առող է եղել հայերին» և այլն այսպիսի յիմարութիւնները: Բայց «Новое Время»-ի ան-տակա և կարծաճիտ դատողութիւնները, որոնք արտասպաղեցան բոլոր թիւրքաց լրագրիներից, չը կարողացան երկար պահել իրանց նշանակու-թիւնը. այսօր երևաց Phare du Bosphore-ի մէջ «ПОРЯДОК» լրագրի № 202 առաջնորդող յօդու-ածը հայոց խնդրի մասին. այդ յօդուածով յար-գելի լրագրի յայտած գործնական և խոհուն մտքեր մահաբեր ուսումն ունենցաւ թիւրքաց մամուլի գլխին, աննկարարելի ազդու էլ դըր-գիւն յարուցանելով, առանց այն էլ սրտերի մէջ՝ ուսանելից միշտ սարսափահար, թիւրքերի մէջ: Ասում են, որ Սայիդ-փաշան, աչքի անցնելով այդ «Թունալը» յօդուածը, խիտ վրդովված կանչել է տպագրութեան ընդհանուր տեսչին և սպառնալից կերպով յանձնարարել, որ եթէ միւս անգամ էլ երևան և Պոլսի լրագրիների մէջ այդ-պիսի «զայթաղական» յօդուածներ, տեսուչը չարաչար կերպով պատասխանատու կը լինի: Բայց եղած ազդեցութիւնը արդէն եղաւ և Թիւրք-քիսի տերութիւնը կրկին ևս հոռոզեց, որ իր յոյսը՝ իրը թէ՛ ուսուց կառավարութիւնը չըն-չում գործելով իր հպատակ հայերի վրա (թիւրք-քաց կարծիքով) միշտ ի նպաստ թիրաբար մի բարեբար գործ արած կը լինի, էլ այդ յոյսը կրկին սպայցոյցով օղը ցնդից, որովհետ այս օր նա տեսաւ, որ կրտսպազօժանական լրագրի-րի էջերում անգամ միանգամայն աներկղիմի կերպով, առանց թիւրքաց և ուսումնասիրութի-ւնից տալ հայերին կողմից մէջ բողբ ուրիշ փոքրիկ աղբերի շահերին ևս Տաճարապետական առանձին մեռանշորհակ դրութիւն: Ինչպէս միշտ կրախտապէս հպատակ և իր ազդեցութիւնը յար-գող իւրաքանչիւր հայ ի հարկէ չէ կարող բոլոր արակց չողջունել «ПОРЯДОК» լրագրի մէջ յայտ-նած դադարախնդրը որոնք ուրախութեամբ պի-տի առած օրից օր ուսում ինտելլիգենցիայի ան-խախտ համոզմունքն են դառնում Հայաստանի և ուսուց շահերի վերաբերմամբ:

Կրտսուցութեան առնելով այսպիսի մի սերտ և անբաժան համեմատութիւնը Ռուսաստանի և հայոց շահերի մէջ փոքր-Ասիայում, որչափ ցա-ւալի է տեսնել, որ Ֆրանկիների թողած յիշատա-կի տիտոյ ազդեցութիւնը դեռ վերադառնալ չէ կորցած իր հետքերը, որովհետ թիւրք մամուլը իր խոսովարար յօդուածների մէջ ուսուց դէմ-մինչե հիմայ ևս չարուանկում է պնդել թէ՛ ռուս-նըրը թիւրքանի են հայերին, որովհետ Ղարսի նահանգի մէջ արգելում են հայերին ընակութիւն հաստատել. Բաթումի մէջ չեն թողնում հող դը-նելը և այլն այսպիսի բաներ: Եթէ այս բաները դեռ տեղի ունեն մինչև հիմայ ևս — որ յուսով ենք էլ հաւանականութիւն չունեն — ցանկալի է, որ չուսով վերստան այդ վեասակար կարգա-դրութիւնները դանական ստոր վարչական կա-ռավարչիների կողմից, որոնց չափազանց ե-ռանաղը: Միշտ այդչափ վեասակար է եղած տե-րութեան մեծամեծ և էական շահերին, որ և իցէ մի նահանգի մէջ մի քանի հազար հազի երկը-գործ հայ աւել կամ պակաս չենք կարծում որ վտարակենն այն ընդարձակ շահերը, որ ունէ Ռուսաստանը համայն փոքր-Ասիայի մէջ...

Այս տեղի հայ մամուլի մէջ ևս ի հարկէ կան այնպիսիները, որոնց համոզմունքը վրա կարողանում են ներգործել թիւրք լրագրիների արծար-ծած չարակամ մտքերը, վստանոր մէկը հայ լրա-գրիներից քննելով այս օրերս հայոց դրութիւնը կողմատու, բաւական թերահաւատութեան էր լրագրի մէջ մի քանի քիչ յետոյ ենթադրելով, որ իրաւի եթէ Ռուսաստա-նի անհրաժեշտ շահերը պահանջին կողմից հա-նրին մեռանշորհակ (привилегияны) դրու-թիւն տալ, այն ժամանակ ինչպի պիտի սկսվեն այդպիսի մեռանշորհակութիւններ: Խօսելով այս մասին յիշեալ յօդուածագիրը՝ առում էր, որոց է՛ առանց իրաւունքի, թէ՛ չայդ մեռանշորհակ-ութիւնները պիտի սկսվեն նախ Ղարսի նահան-գին կից հայաբնակ գաւառներին աւա կատա-րիաւ ազատութիւն տեսնալովով որչափ թեւով

որ ցանկանան Ղարսի նահանգը. երկրորդ՝ կող-կասի համայնարանի մէջ հայոց լեզուով ևս դա-տարաբանութիւններ անելը ազատ և պարտաւորիչ լինի. երրորդ՝ Երևանի նահանգում ուժովացնել հայոց տարրի մուսուր և բարոյական ազդեցու-թիւնը, լեզուի տիրապետութիւնը և այլն: Աճա այս մի քանի հայեացքներ մէջ բերելով, ուղեցի տեղեկացնել ձեզ թէ՛ որչափ մեծ յեղափոխու-թիւն կարող են անել ի նպաստ մեր աւերութեան շահերին այստեղ մի քանի բարեմիտ և ազատա-խօս ուսում լրագրիների յօդուածները: Այս կող-մից մեծապէս շնորհակալութեան արժանի են ի հարկէ նախ «Голосъ»-ը յետոյ «Русскій Ку-рьеръ»-ը և միւսերը. նմանապէս և թիֆլիսի ուսում լրագրիները, որոնք այդչափ լաւ կերպով են ըմբռնած ուսումն ազդեցութեան և ընդհանուր հայերի շահերը ինչպէս կողմակալ մէջ, այնպէս և ամբողջ փոքր-Ասիայում:

Վրդար Երկողոսեան

Ի ԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Մի ամերիկական լրագրի հաղորդել է՝ որ նո-րերուս Ամերիկայի Տենեսի նահանգում մի կին ծնել է մի անգամից 7 երեխայ, որոնք բոլորն էլ անող են և միմեանց սաստիկ նման: Կնոջ ամուսինը մի փոքրիկ հասակի և նիստ մարդ է, իսկ ինքը մայրը բարձրահասակ և շատ առողջ կին է: Եատերը գնում են եօթ երեխաներին, ընտելեան այդ հրաշքը տեսնելու:

Կ. Պոլսի «Փնտն» լրագրում կարգում ենք հետեւեալ ծիծաղելի յօդուածը: «Տիֆլիսի նահա-ւոր և բազմաձեռն ազգայիններէն Վսեմ. Իշ-խան Ամատունիս օրբ թոբ մայրաքաղաքս գալով Աերայի Անգլիական օթեանն իջու: Նո-րին Վսեմութիւնն հետեւալ օրը վտարացաւ ի տես Ս. Պարսիքը Հօր և քանի մը ժամ խօ-տակցեցաւ: Արաբէք օր ալ իր ներկայութեամբը պատուեց իւսկիւտարի Խճաթէջի Մեզուարեան իրական վարժարանի միջանակարար թէման հանդէս, որ ամենաբարեկերպի կատարուեցաւ. ընդ նախագահութեամբ Ս. Պարսիքը Հօր: Իշխան Ամատունիս նախնի հայկազանց արկն ու տիպաբը կը կրէ. յարթահասակ, վայելչագեղ, դուրսնուղէմ և դեռ յարուստ. իր նախնիքն Հնդկաստանն բազմազան ճօտութեամբ կող-կաս անցեր, պատուով և մեծարանօք ընդունուեր են վրաց թագաւորէն, և ի կարեւր Տաթլի մեծ փոխառութիւն մընելով վրաց թագաւորու-թեան, ապա հարկաւորուեր են Վոբ գետին մէկ կողմը ընդարձակ բայց յայնժամ անարժէք եր-կիր մը բնուելի ի փոխաբէն, որ սակաւ արժէք ստացեր է՝ զիւղերու դիւրաբազաքներու վերա-ծուելով: Իշխան Ամատունիս Բեղաբարբուրի հա-մայրաբանին մէջ ուսումն առած է. Հայ լեզուն ու ազգութիւնն միշտ սրբելի եղած են իրեն, և ի սեր Հայ լեզուի ու ազգութեան ոչինչ ինչպ-յած չէ ցարդ: Տիֆլիսի ամեն կարող ազգայինք են լրագրիները կը վկայեն: Իշխան Ամատունի Տիֆլիսի հայկական թատրոնին յառաջադիւնու-թեան համար ալ նիւթապէս ու բարոյապէս օժանդակած է, գիտելով քաջ թէ թատրոնը ալ իրրէ վարժարանը և լրարանը կողմն ազգային լեզուի ու բարոյականութեան զարգացման: Եւ արդարն Տիֆլիսի Հօր» որ քանի մի տարի յա-ռաջ ամենամեծ մասնոր գուրկ էր Հայ լեզուն և իրրէ օտար ինչ էր իրեն համար, և ի սկզբան հաստատութեան Հայ թատրոնին՝ իրրէ օտարագ-րի կը ձանձրանար, այժմ ամենամեծ մասամբ կը յաճախէ և կօգտի՝ ընտելանալով մայրնի գեղեցիկ լեզուին և սկսելով կապուիլ ազգային կապերով: Իշխան Ամատունիս անմասնաւի յարեարարութեանց մինն է այս: Նորին Վսեմու-թեան վրայ այս համառօտ ձանթութիւնն մեր աղինը ընթերցողաց հաղորդելէն յետոյ ինչու-թեամբ կը շնորհաւորուեր իր գաւառան ի մայ-րաքաղաքս Թիւրքիոյ, և կըլծաք որ մեր բազ-մակարգիտ Ազգն ունենայ բազում Հայ մեծամե-ծներ՝ այս ոգով և այս սրտով: Իշխանին հետ մայրաքաղաքս եկած է Տիֆլիսի ազգային երեւելի փաստաբաններէն Մեծ. Աղա Բարսեղ Շանչեանց ալ: Կը լսեմք, թէ առաջինայ շարքու կը մեկ նին Օտէնա կամ վրէժնա երթալու համար:»

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՄՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԵՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի: Այսօր փոխանակվեցան վաւերացած դաշնագրի նե-րը Ռուսաստանի և Չինաստանի մէջ:

ՆԻՒ-ԽՈՐԿ, 7 օգոստոսի: «Herald» լրագրի մէջ տպված է Վարսեանի նամակը, որով նա հաղորդում է, թէ վերադարձել է Նիւ-Խօրկ և, եթէ հարկաւոր լինի, կը փորձի ապաստանի իրաւունքի ոյժը դա-տարանի առաջ: Այսօր Գաթուսն յայտնեց իր ցանկութիւնը Ամերիկայի քաղաքացի գաղմար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի: «Правит. Вѣстн.» լրագրի հաղորդում է ներքին գործերի միւնիստրութեան կարգադրու-թեամբ «Новая Газета» լրագրին առա-ջին նախագաղաւթիւն է տուած և ար-գելված է նրա համարների հատով ծախ-վելը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի: «Новая Газета» լրագրի մէջ այսօր տպված է Հե-տեւալը, խորին ցաւով այսօր մենք ստիպ-ված ենք յայտնել մեր ընթերցողներին, որ «Новая Газета» այլ ևս չի հրատարակվի: Մենք պատրաստ էինք ծառայել թանգա-զին հայերնիքին մեր հոգու բոլոր ոյժերով, բայց կարելութիւն չենք գտնում շարունա-կել մեր լրագրի հրատարակութիւնը և դա-դարեցնում ենք նրան 8 համար հրատա-րակելուց յետոյ: Մեր պրօգրամը յայտնի էր հասարակութեանը և մենք ոչ մի բան այն-քան և ուանդով չենք պաշտպանել, որքան լուսաւորութեան շահերը և Ռուսաստանի քաղաքական, հասարակական և բարոյական վերածադման գործը: Մեր ձգտումները մա-քուր են եկել Աստուծոյ, թագաւորի և Հայրնիքի առաջ: Ռուս հասարակութիւնը կարծես գնահատեց այդ ձգտումները և պաշտպանեց մեզ իր ուշադրութեամբ: Մենք այդ հասարակութեանը յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը և յոյս ու-նենք, որ նա կը հասնանայ մեր վճռի ան-հրաժեշտութիւնը: «Новая Газета» լրա-գրին ստորագրվող անձինք հրատարակում ենք յետ ստանալ իրանց փողը խմբագրութեան ժամանակաւոր գրասենեակից, բառէ յնայա փողոյի վրա, կրանկալու տանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսեր առաջին շքանի ար-ժէ 96 ռ. երկրորդ 94 ռ. 37 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 25 կ., ներ-քին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 230 ռ., երկրորդ 228 ռ. 25 կ., տ-րեւերան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 37 կ., երկրորդ 91 ռ. 37 կ., երրորդ 91 ռ. 37 կ., ոսկի 7 ռ. 78 կ.: Ռու-սաց 1 ըուրը Լոնդօնի վրա արժէ 25,75 պէս, ուսուց 100 ռ. Համբուրգի վրա ար-ժէ 220 մարկ 50 սփ., Փարիզի վրա արժէ 271 ֆրանկ 50 սանդիմ: Բօրայայ արամա-գրութիւնը ամուր է:

«ՄՇԱԿԻ» ՊԵՏԱՍԻՍՆԵՐ

— ՄՈՒԿԱՆ. Ն. Տ. Գ. Եթէ ձեր նամակը Գր-խի դէմ կարող էր տպվել, ինչէ նրա նամակը ձեզ դէմ էր կարող տպվել: Վտարագրութիւնն-րով նամակը չը կարողացանք տպարկել, իսկ ինչ որ վերաբերում է ձեր մեզ առած խորհր-դներին Վշախի ուղղութեան մասին, մենք մեզա-ւոր չենք. եթէ ցուք հակասութիւն էք գտնում «Մշակի» ուղղութեան մէջ և չէք հակակցել նրա ուղղութիւնը:

— ԱՆԳՈՒ. Ն. Վ. Բրօշխրը ձեզ ուղարկել-ցու:

— Կ. ՊՈՒՐԿ. Հայկազ. վարոյց է ձեզանից նամակ չունենք: Գուք գիտէք որքան նշանա-կութիւն ունեն ձեր թղթակցութիւնները «Մշ-ակի» համար:

— ՂՈՒԲԱ. Մ. Յ. Շատ ցաւում ենք որ կար-գալով «Մշակը» չէք նկատում ինչ է տպված լինում նրա համարներում: Ձեր հայելը վաղուց տպված է ներքին լուրերում:

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գ Ա Մ Ա Ռ - Գ Ա Թ Ի Պ Ա Յ Ի

Բոլոր բանաստեղծութիւնների ժողովածուն, ապա՝ Մասկվայում ամենաբարձր թղթի վերայ, հեղինակի վիճակը պատկերով, զինք 50 կ. վաճառվում է ԿՆՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՑՈՒՄ:

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

- 1) Ռոբինզոն-Կրուզո՝ Աղանան, 60 կ.
- 2) ԱՏՃԵՂԻ ԹԱՊԱՐԱՆՔՆԵՐ ԼՂԱՅԻՆՆԵՐ, 10 "
- 3) Ծ ա զ կ ա ք ա ղ արձ. և չափ. բանից՝ Կոստանեան՝ — 25 "
- 4) Ուսուցիչ հայոց լեզուի՝ Նազարեան՝ — 40 "

Վերջին երկու դասագրքերից զուամբողջ գնորդները նշանաւոր զիջումն են ստանում:

144 Արժուճու գալէրէս 144
ամենակամ պահեստ մարտի և հայրենիքի:

Հրատարակութեամբ Ներսիսի Միլեօնեանց լոյս տեսաւ գերմանացի բժէշկ Նրէբերի «Տնային բժշկական մարմնամարզութեան» գրքոյի հայերէն թարգմանութիւնը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմաթիւ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց զործիքի:

Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախվում է «Կենտրոնական և Կովկասեան գրա-վաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանանցի մօտ.» Тройцкій пер. типография Вартачанца, въ Тифлисе.

ՀԷՆՑ ԻՍԿՈՑՆ ՍՏԱՅՎԵԼ են մեծ քանակութեամբ հրացաններ, ՌԷՎՈԼՎԵՐՆԵՐ, փամփուշաներ, ԹԷՅ առաջին տեսակի, բոկայներ և այլն: **204 ԲՕՐ** (choke bore) **ՀՐԱՅԱՆՆԵՐ** George Dau-ի գործարանից 120 ռ., ՌԷՎՈԼՎԵՐՆԵՐ բուլղոզ 11 ռուբլոց, 700 ՄՍՀ-ՃԱԿԱԼՆԵՐ 5—40 ռուբլ: Ծախվում է նոյնպէս պարուսին կիսագնով և այլումներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՁ:** 11—12

Въ Редакціи газеты «МШАКЪ»
Продается ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխվեցաւ Գ ա ն ո Վ ա կ ա փո-ղոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՕՅԻՑ փողոցը № 11. փ օ տ ա տ ա ն հասկի քուչանս ընդունվում են ամեն լի-զուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամատչելի գներով:

Նոյն ապարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ապագրութեան համար փայտի և պղնձի վրա:

«Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՑՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՓՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՉՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅԻՒՄ

Տպւած մաքուր թղթի վրայ, զերբ բաղ-կանում 400 կրկնից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական գրա-վաճառանոցում» պ. Զաքարիա Կրկորեանցի մօտ, և պ. պ. Նահնկեանցի, Բօզար-ջեանցի, Հովսէփեանցի ծխատոտի մաղաղի-նիւում:

Գինն է 1 ռուբլ 20 կոպ.:



Վ Ա Ր Շ Ա Վ Ա, իր յատկութիւններով մարմնի մասերի և մանաւանդ ոտքի մասերի քրտինքից առաջ եկած փառն ոչնչացնող յայտնի նիւթը,
Գ Ա Լ Մ Ա Ն Ի Ն

անուշով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների զեղանների և գրողիանների մօտ: Գլխաւոր դէպք նիւթի հարող Ֆարմացի մաղխարոս Վ. **ԿԱՐՊԻՆՍԿՈՒ** զեղանան մէջն է գտնվում, Վարչապետում, Էլէկտորանի փողոց № 35. Գարմանի մեծ արկղիկը արժէ Վարչապետում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ. պէտք է գգուշանալ խարդախութեանցից և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը ունենայ զործածութեան մեկնութիւնը և փարիզի աշխարհահայտնի մեղալները. **Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ** 16—20 (1)

Վ Ի Է Ն Ն Ա Յ Ի Մ Ե Բ Ե Լ (աթուներ և բազկաթուներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատարիկաց փողոցի անխնում ՄԻ-ՔԱԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍՏԱՆԻ պահեստում:

Օտարաբարձրացիք կարող են դիմել այս հասցեով. Тифлисе, Михайлу Н. Теръ-Никогосову.
53—150

Կերականիցնոյ **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը առաջնոյ և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ** վերայ: Ճնոր Գինը 2 ռ. շիշը, **ՓՈՍՍԱՅՈՎ** ուղարկված 2 ռ. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ



Կի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԻԿ**, մազերը առաջնոյ և նրանց համար, 1 ռ. ամենը զիջին գլխա-յաւի դէմ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւեա ջրեր և այլն: 10—100

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՅԻՒ ԽԵՆԹԸ** անու-նով փրկատուութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաւեր-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ՔԱՎԼԸՂ պ. Գրիգոր Բէջանեանցին. Հրատարակչի հասցէն. Մյուս, въ конторѣ Армянца АБЪЛУ АП-РЪСЯНЦУ.

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ
ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ
ВЪ НАЙМЫ
Въ галереѣ имѣются: вода, газовое освѣщение и телеграфная станція.
10—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՈՒՄ
ՎԱՐՁՈՎ ՏԵՎՈՒՄ ԵՆ ՄԱԿԱՑԻՆԵՐ
Գալլերէում կայ ջուր, գազի լուսաւորու-թիւն և հեռագրական կայարան:
10—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կօնֆեկաներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՍՏԵՆԴԷՆ, բօկայներ, թասեր, երես լուսա-նայու ամաններ, չայիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարան-ներ, կողմէրներ, ԳՆՆԱԿՆԵՐ, գգալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիւներ, տետրակ-ներ, ՀՐԱՅԱՆՆԵՐ, ՌԷՎՈԼՎԵՐՆԵՐ, ալբոմ-ներ, ՄՍՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիօ, պա-րուսին, թիւշկինաներ, երեսբրէշներ, կլեօն-կա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՑՆ, խե-րես, կօնեակ և այլն: ԹէՑ մեծ քանակու-թեամբ ՎԱՅԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԳԸ 44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54 ռ., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՁ:**

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մա-գնեղիա, խոնր ԾԱՐԱԻԻ դէմ, ԽԻՆԱՅԻ գի-նի ջերմի դէմ, կարթուան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ փոսերկիօյե-տի համար, պարսկական փօշի:
46—100

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
անուշով ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՍՅՑ
դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրոնական գրաւաճա-րանոցներում:

Գինն է 40 կոպէկ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէ-կով ձեռք բերել, զինք **ԿԱՆԽԻԿ** զճա-րելով և ճանապարհա ծախսը իր վրա առնելով:

Թող դիմէ մեզ հետեւեալ հասցեով.
«Въ Тифлисе.— На Авлабарѣ. И-вану Петровичу Назарьянцѣ.»

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ռ., ճըծողներ 1 ռ., ծախվող աթուներ 1 ռ. 50 կ., ՓԱՅՏ-ԱՔՈՒՒ 4 ռ., ԲԱԶԱՔՈՒՒ-ՄՍՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պատեղա ծխողների համար 60 կ. Փոնաւը, անգլիական ՎԱՆՆԱ-ՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՁ:**

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.— 1 ռ., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ռ., 1,000 ՄՍՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ռ.—35 ռ., 400 արշին բոսաղէյ. 1 ռ.—1 ռ. 30 կ., պա-րուսինա 40 կ.—1 ռ., 300 հատ թէյօլիկեր 4 ռ.—35 ռ., 700 ալբոմ կրօստիկով, 10,000 Փոնաւ թէյ ՔԵՅԱՄԱՆՈՎ 1 ռ. 65 կ. եր-կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-մար: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՁ:**

28—100